

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԲԱԶԻԿՅԱՆ ԼՈՐԵՏԱ ԱՐԱՅԻ**

**ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ  
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ  
ՀԱՅԵՑԱԿԵՐՊԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ  
(ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ)**

**Ժ.02.07 - «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ-2022**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.գ.թ., պրոֆեսոր Մխիթարյան Ելենա Սարիբեկի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.գ.դ., պրոֆեսոր Բրուսյան Լիլիթ Գեորգի  
Բ.գ.թ., դոցենտ Վելյան Կարեն Արմիկի

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թ. մարտի 30-ին՝ ժամը 11-ին, ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թ. փետրվարի 17-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
Բ.գ.դ., պրոֆեսոր՝



Գայանե Մուրադյան

Լեզուն շարունակաբար զարգացող կենդանի համակարգ է, որի զարգացումն ակնհայտ կերպով դրսևորվում է նաև քերականական հարաբերությունների վերինաստավորման և դրանց արտահայտչամիջոցների փոփոխության մեջ: Լեզվի զարգացման ամեն մի շրջանում յուրաքանչյուր քերականական կարգ իր արտացոլումն է գտնում իմաստային դաշտում՝ փոխհարաբերվելով իմաստային կարգերի հետ:

Անդրադարձությունն ու փոխադարձությունը ընդհանրական համալեզվաբանական կարգեր են, որոնք իրենց արտահայտությունն են գտնում գրեթե բոլոր լեզուներում, թեև դրանց արտահայտման եղանակները տարբեր լեզուներում տարբեր են: Որոշ լեզուներում դրանք տարբերակվում են որպես բայական իմաստային առանձին կարգերի տարատեսակներ, մյուսներում դիտարկվում են բայաստեղի շրջանակում: Վերոհիշյալ կարգերը աչքի են ընկնում ինչպես իրենց յուրօրինակ կառուցվածքով, այնպես էլ զանազան գործաբանական նրբիմաստներով և նպաստում, ըստ մեր գիտական վարկածի, մի կողմից՝ անգլերենի (հայերենի զուգադրությամբ) բազմաթիվ ձևաբանական և շարահյուսական կառույցների առաջացմանը, մյուս կողմից՝ խոսքի մասերի ավանդական կիրառման ձևերի և գրական տարբերակների փոփոխությանը:

Սույն աշխատանքի **օբյեկտը** անդրադարձության և փոխադարձության կարգերն են գործառական և գործաբանական լեզվաբանության լույսի ներքո:

Մեր ուսումնասիրության **առարկան** անդրադարձ և փոխադարձ բայերով և համարժեք դերանուններով կազմված կառույցներն են, որոնք տարբեր համատեքստերում ձեռք են բերում գործառական և նոր իմաստագործաբանական առանձնահատկություններ՝ էականորեն վերափոխելով նախկինում դրանց գործառույթները խոսքում և լեզվում առհասարակ:

Սույն հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է անդրադարձ և փոխադարձ կառույցների բազմակողմանի և համակարգված վերլուծության անհրաժեշտությամբ, մասնավորապես գործառական և գործաբանական լեզվաբանության դիրքերից: Բացի այդ, անգլերենի և հայերենի զուգադրական վերլուծությունը մեծապես նպաստում է լեզվական փաստերի առավել մանրակրկիտ և համապարփակ մեկնաբանությանը՝ ի հայտ բերելով լեզուների միջև գոյություն ունեցող ընդհանուր և տարբերակիչ հատկությունները:

Մեր հետազոտության **նպատակն** է բացահայտել անգլերենի անդրադարձ և փոխադարձ կառույցների գործաբանական առանձնահատկությունները, ուսումնասիրել դրանց տեսակներն ու գործառույթները լեզվի տարբեր մակարդակներում, ինչպես նաև նշյալ կառույցները զուգադրելով հայերենի հետ՝ ներկայացնել վերջիններիս ընդհանրություններն ու տարբերությունները:

Սույն աշխատանքը միտված է լուծելու հետևյալ **խնդիրները**՝

- ♦ որոշել անդրադարձության և փոխադարձության կարգերի տեղը լեզվի համակարգում,

- ◆ հետազոտել անդրադարձ և փոխադարձ կառույցների դասակարգման հիմնական սկզբունքներն անգլերենում՝ զուգադրելով հայերենի հետ,
- ◆ ուսումնասիրել անդրադարձ կառույցների յուրահատկությունները երեք մակարդակներում՝ իմաստային, շարահյուսական և վերաբերային,
- ◆ մշակել անդրադարձ բայերի իմաստային վերլուծության մեխանիզմը,
- ◆ որոշարկել անդրադարձ և փոխադարձ կառույցների շարահյուսական դասակարգման չափանիշները լեզվաբանության մեջ,
- ◆ անցկացնել անդրադարձ և փոխադարձ կառույցների իմաստաբանական-գործաբանական քննություն՝ վեր հանելով նշյալ կառույցներում առկա բայերի և համարժեք դերանունների գործաբանական հատկությունները,
- ◆ քննել սաստկական անդրադարձ կառույցների իմաստակառուցվածքային և լեզվագործաբանական առանձնահատկությունները անգլերենում՝ համեմատելով հայերենի համարժեք կառույցների հետ:

Վերոնշյալ խնդիրներն իրագործելու համար կիրառվել են կադապարման, փոխակերպման, համեմատման և զուգադրման, բաշխումային և վիճակագրական, բաղադրիչային և համատեքստային վերլուծության **մեթոդները**:

Սույն ատենախոսության **գլխական նորոյթն** է անգլերենի անդրադարձ և փոխադարձ կառույցների վերլուծությունը տարբեր մակարդակներում՝ ձևաբանական, շարահյուսական, իմաստաբանական և գործաբանական: **Նորոյթն** է նաև այն, որ աշխատանքում առաջին անգամ կատարվել է անգլերենի և հայերենի անդրադարձ և փոխադարձ կառույցների զուգադրական վերլուծություն՝ ի հայտ բերելով դրանց միջև եղած նմանությունները և տարբերությունները: Հետազոտության արդյունքները նաև հնարավորություն են ընձեռել նորովի դիտարկել հայերենի համարժեք կառույցները:

Աշխատանքի **տեսական արժեքը** անգլերենի անդրադարձության և փոխադարձության կարգերի և դրանց հետ առնչվող կառույցների իմաստագործաբանական վերլուծության փաստն է, որը կարող է լրացնել նշյալ կարգերի մեջ գոյություն ունեցող բացերը՝ այդ ձևով նպաստելով տվյալ շարահյուսական միավորների տեսության ընդլայնմանը և հարստացմանը:

Ուսումնասիրության **գործնական արժեքն** այն է, որ սույն հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել գործառական և գործաբանական լեզվաբանության, հանրալեզվաբանության ոլորտների ուսումնասիրություններում, ինչպես նաև տեսական և գործնական նյութ կարող են ծառայել քերականությունից, իմաստաբանությունից և գործաբանությունից հատուկ դասընթացներ, ուսումնական ձեռնարկներ և դասագրքեր, կուրսային և ավարտական աշխատանքներ իրականացնելու համար:

Սույն աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք համապատասխանաբար բաժանվում են ենթագլուխների, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

**Ներածության** մեջ ներկայացվում է ուսումնասիրության առարկան, որոշարկվում են աշխատանքի նպատակն ու խնդիրները, հիմնավորվում են թեմայի արդիականությունն ու նորոյթը, տեսական և գործնական արժեքները:

Ատենախոսության առաջին գլուխը «**Անդրադարձության և փոխադարձության կարգերի տեղը լեզվի համակարգում**» բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին գլխի առաջին ենթագլուխը «**Բայասեռի հասկացությունը և սահմանումը անգլերենում**» անդրադառնում է բայասեռի քերականական կարգի բնութագրմանը և սահմանմանը, տարբեր լեզվաբանների տեսակետներին և նշանակալի տեսություններին, ինչպես նաև սեռերի քանակի և դրանց տարբերակման հիմքերի վերաբերյալ առկա տեսակետների քննարկմանը:

Լեզվաբանների մեծամասնությունը անգլերենում ընդունում է երկու հիմնական սեռ՝ *Ներգործական կամ Չեզոք սեռ (Active Voice)* և *Կրավորական սեռ (Passive Voice)*:<sup>1</sup> Նրանք անդրադարձությունը և փոխադարձությունը, միջին սեռն ու պատճառականությունը դիտարկում են որպես բայական իմաստային կարգեր՝ իրենց ինքնատիպ հատկանիշներով:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում վերնագրված «**Անդրադարձությունը և փոխադարձությունը որպես բայական իմաստային կարգեր**» ուսումնասիրվում է նշյալ կարգերի հայեցակերպը լեզվական համակարգում, ներկայացվում են տարբեր հետազոտողների և տեսությունների կողմից առաջ քաշված հնարավոր մոդելները, որոնք նպաստում են վերոնշյալ կարգերի դիրքորոշմանը իմաստաբանական դաշտում:

Անդրադարձ և փոխադարձ կառույցները հանգամանորեն ուսումնասիրվում են *Սերող քերականության* լույսի ներքո (*Generative Grammar*), մասնավորապես՝ *Կառավարման և Միավորման տեսության* (*Government-binding theory*) դիրքերից (Chomsky 1993, 1986): Վերջինս իր մեջ ներառում է *Տեթա տեսությունը (Theta-Theory)*, որը վերաբերում է բայերի և իրենց ակտանտների իմաստային հարաբերություններին և *Միավորման տեսությունը (Binding theory)*, որը հարաբերում է տարբեր տեսակի գոյականներ՝ իրենց նախորդող հարաբերյալների հետ:<sup>2</sup>

Առաջին գլխի երրորդ ենթագլխում «**Անդրադարձության և փոխադարձության կարգերի բնութագիրը հայ լեզվաբանության մեջ**» քննարկվում են հայ լեզվաբանների կարծիքները, նրանց տեսությունները՝ բայական սեռի և

---

<sup>1</sup>Викуллова Е. *Теоретическая грамматика современного английского языка*. Екатеринбург: Изд-во Уральского ун-та, 2014, с. 54, Иванова И., Бурлакова Г., Почепцов В. *Теоретическая грамматика современного английского языка*. Москва: Высшая школа, 1981, с. 74, Кобринна Н., Корнеева Е., Оссовская М., Гусева К., *Грамматика английского языка: Морфология*. Москва: Просвещение, 1985, с. 70, Carter R., McCarthy M. *Cambridge Grammar of English*. Cambridge: CUP, 2006, p. 793.

<sup>2</sup>Кибрик А., Кобозева И., Секерина И. (ред.) *Современная американская лингвистика: фундаментальные направления*. Москва: Либроком, 2010, с. 33.

անդրադարձ և փոխադարձ կառույցներին վերաբերող տեսական հարցերի շուրջ:<sup>3</sup>

Աշխատանքի երկրորդ գլուխը «Անդրադարձության կարգի գործառական և իմաստային-գործաբանական վերլուծությունը» բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին ենթագլուխը «Անդրադարձ կառույցների կառուցվածքային առանձնահատկությունները անգլերենում՝ հայերենի զուգադրությամբ» անդրադառնում է անդրադարձ կառույցների գործառույթներին և դրանց նշանակիչ եզրույթների քննությանը, ինչպես նաև անգլիացի և հայ հետազոտողների կողմից ներկայացված դասակարգմանը: Վերջինս բաղկացած է երկու բաժիններից և զուգորդվում է գծապատկերների ներկայացմամբ:

Սույն ենթագլխի առաջին ենթաբաժնում «Անգլերենի անդրադարձ կառույցների դասակարգման սկզբունքները» քննության են առնվում անդրադարձ կառույցների երկու հիմնական տեսակները՝ «բառային» (*lexical/ verbal strategy*), որն արտահայտված է բուն անդրադարձ բայով իր դրսևորած անդրադարձ իմաստով (*to wash, to shave, to brush, to dress, to bathe*) և «վերլուծական» (*analytic/ nominal/ anaphoric/ periphrastic strategy*), որը հանդես է գալիս անցողական բայով և անդրադարձ դերանվամբ (*myself, yourself, himself, herself* և այլն):<sup>4</sup>

Օրինակ՝ *I dressed, had some coffee in the kitchen ...* (Hemigway) (բառային)

*She had her arm in plaster, but she managed to dress herself.* (BNC) (վերլուծ.)

Սույն ենթագլխի երկրորդ ենթաբաժնում «Արդի հայերենի անդրադարձ կառույցների հիմնական տեսակները» առանձնացվել են 1) բառային (*գժվել, զբաղվել, թաքնվել*), 2) ձևաբանական (*լվանալ-լվացվել, սանրել-սանրվել*) և 3) վերլուծական (*ինքդ գրի, իրեն զսպել*) անդրադարձության տեսակները:<sup>5</sup>

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը «Անդրադարձ կառույցների շարահյուսական-իմաստաբանական դրսևորումները անգլերենում՝ հայերենի զուգադրությամբ» վերաբերում է անդրադարձ կառույցների բաղադրիչային վերլուծությանը երեք հիմնական մակարդակներում՝ իմաստային, շարահյուսական և վերաբերային, որոնք ներկայացված են համապատասխան բաժիններում:

---

<sup>3</sup>Աբրահամյան Ա. *Բայը ժամանակակից հայերենում*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1962, էջ 446-447, Ասատրյան Մ. *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր*, Հատոր Բ, Երևան, ԵՊՀ հրատ., 1977, էջ 190-191, Ավետիսյան Յու., Չաքարյան Հ. *Հայոց լեզու: Ձևաբանություն*, Երևան, «Չանգակ», 2015, էջ 86, Իշխանյան Ռ. *Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը*, Երևան, ԵՊՀ հրատ., 1971, էջ 152-153, Խլղաթյան Ֆ.

*Ժամանակակից հայոց լեզու*, մաս Բ, Երևան, «Չանգակ-97», 2010, էջ 147:

<sup>4</sup>Belikova A. *Getting L2 Reflexive and Reciprocal Verbs Right*. Ph. D. dis., McGill University, Montreal, 2013, p. 8, Payne Th. *Understanding English Grammar: A Linguistic Introduction*. Cambridge: CUP, 2011, pp. 307-311, Siloni T. *The syntax of reciprocal verbs: An overview // Reciprocals and Reflexives: Theoretical and Typological Explorations*, König E. and Gast V. (eds.), Berlin: Mouton de Gruyter, 2008, pp. 451-498.

<sup>5</sup>Dum-Tragut J. *Armenian: Modern Eastern Armenian*. Amsterdam: Benjamins, 2009, p. 177.

Երկրորդ ենթագլխի առաջին բաժնում «Անդրադարձ կառույցների իմաստային դասակարգումը» առանձնացվում է անդրադարձ բայերի երկու հիմնական ենթախումբ՝ *արտաքին* և *ներքին*: Արտաքին անդրադարձ բայերը արտահայտում են արտաքին անմիջական ուղղվածություն ունեցող գործողության իմաստ (*to dress-hագնվել, to comb-սանրվել*), իսկ ներքին անդրադարձները վերաբերում են անձի հոյզերին, որոնք որևէ արտաքին գործոնի հետևանքով մնացել և պարփակվել են սուբյեկտի մեջ (*to worry-մտախոգվել, to suffer-տանջվել*): Հարկ է նշել, որ անգլերենում արտաքին իմաստը արտահայտված է լոկ անդրադարձ բայով, իսկ ներքինը՝ բայի վերլուծական տեսակով: Ինչ վերաբերում է հայերենին, այստեղ երկու տեսակներն էլ ներկայացված են անդրադարձ բայերով:

Օրինակ՝ *Some individuals may be able to wash, shave, dress...*<sup>6</sup> (արտաքին)

Որոշ անհատներ կարող են լվացվել, սափրվել, հագնվել...

‘Do not worry and *excite yourself*. Be a good boy.’ (Hemigway) (ներքին)

- Մի՛ անհանգստացեք և մի՛ *հուզվեք*: Խելո՛ք մնացեք: (Հեմինգուեյ)

Երկու լեզուներում էլ անդրադարձության այս երկու իմաստները կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերներով.

**Գծապատկեր 1**

**Ա/ Արտաքին անդրադարձություն      Բ/ Ներքին անդրադարձություն**



Երկրորդ ենթագլխի երկրորդ բաժինը «Անդրադարձ կառույցների շարահյուսական դասակարգման չափանիշները» անդրադառնում է բառային և վերլուծական անդրադարձ կառույցների շարահյուսական հատկություններին:<sup>7</sup>

Երկրորդ ենթագլխի երրորդ բաժնում «Անդրադարձ կառույցների յուրահատկությունները վերաբերային մակարդակում» քննության են առնվում անդրադարձ կառույցների վերաբերային դրսևորումները և հակադրությունները: Անդրադարձությունը երկու բայական գործողների *համավերաբերայնությունն է (coreference)*, որը միացնում կամ հարաբերում է տարբեր տեսակի գոյականներ և դերանուններ՝ իրենց հարաբերյալների (antecedents) հետ: Ի տարբերություն այլ դերանունների, հարակրկնական բառերը կախյալ դերանուններ են, որոնց հարաբերյալը գտնվում է նույն նախադասության կամ գոյականական բառակապակցության մեջ, հակառակ դեպքում այն կլինի քերականորեն սխալ:<sup>8</sup>

<sup>6</sup>[http://www.cmhc.org/provider/centrain/Training\\_Units/Personal\\_Care\\_Hygiene\\_Grooming/](http://www.cmhc.org/provider/centrain/Training_Units/Personal_Care_Hygiene_Grooming/)

<sup>7</sup>Geniesienè E. *The typology of reflexives*. Berlin: Mouton de Gruyter, 1987, p. 188.

<sup>8</sup>Büring D. *Binding Theory*. New York: CUP, 2005, p. 5, Jacobs R. *English Syntax. A Grammar for English Language Professionals*. Oxford: OUP, 1995, p. 129.

Աշխատանքի այս բաժնում ուսումնասիրվում է նաև անդրադարձության ներգործության աստիճանը, այսինքն, ինչ ձևի և աստիճանի ազդեցություն ունի հարաբերյալը (ենթական)՝ անդրադարձ դերանվան (խնդրի) վրա: Մենք առանձնացրել ենք *ներգործության* հետևյալ տեսակները՝ 1) ծայրահեղ/ թեթև ֆիզիկական ներգործություն՝ *Are you afraid of falling down and killing yourself?* (Ibsen)/ *Art Rossi poured himself a drink and thought.* (Segal), 2) դիրքի, վիճակի, առօրյա գործողությունների ներգործություն՝ *Kohler lifted himself on the arms of his chair.* (Brown), 3) մտավոր ներգործություն՝ *I toil and plan and humiliate myself.* (Carswell), 4) հոգեբանական ներգործություն՝ *I acknowledged to myself that I was not really as I maintained by her shortcomings and mistakes.* (Heller), 5) բարոյական ներգործություն՝ *I have only myself to blame.* (Fitzgerald), 6) զրոյական ներգործություն՝ *Don't act sophisticated-just be yourself.* (OALD):

Ինչպես երևում է, անդրադարձության աստիճանը կարող է տատանվել ծայրահեղից մինչև զրոյական, ինչը բերում է գործողության բացարձակ համընկնմանը: Հարկ է նշել, որ անգլերենի անդրադարձ դերանուններին համարժեք հայերենի անձնական դերանունները կարող են ենթարկվել ցանկացած ներգործության՝ իրենց հարաբերյալներից անկախ:

Երրորդ ենթազվյում «**Անդրադարձ կառույցների գործաբանական հայեցակերպը անգլերենում՝ հայերենի զուգադրությամբ**» ներկայացվում է անդրադարձ բայերի և համապատասխան դերանունների գործաբանական վերլուծությունը, որը զուգորդվում է հայերենի համարժեք լեզվական միավորների հետ: Վերջինս բաղկացած է երկու բաժիններից:

Երրորդ ենթազվյի առաջին բաժնում «**Անդրադարձ բայերի գործաբանական քննությունը**» ուսումնասիրվում են անդրադարձ բայերի զանազան գործաբանական իմաստները, որոնք համապատասխան դերանունների հետ էական փոփոխությունների են ենթարկում քերականական կառույցների ավանդական կիրառման համատեքստը: Հայերենում անդրադարձ դերանունների և բայերի գործաբանական կողմը գրեթե չի հետազոտվել մասնագետների կողմից:

Հիմնվելով որոշ լեզվաբանների կողմից նշված ներիմաստների վրա և ավելացնելով մեր ինքնուրույն դիտարկումները՝ մենք առաջարկում ենք անդրադարձ կառույցների գործաբանական իմաստների հետևյալ բնութագիրը.

1) առօրյա գործողություն կատարելու կարողություն կամ անկարողություն՝ *Is she old enough to dress herself yet?* (OALD)/ Արդյո՞ք նա այդքան մեծ է, որ *ինքնուրույն հագնվի*: 2) խնամքով կատարված գործողություն՝ *He always looked all right, Stradlater, but for instance, you should have seen the razor he shaved himself with.* (Salinger)/ Միշտ էլ լավ տեսք ուներ: Բայց մի տեսնեիք, թե ինչ ածելով էր *սահրվում*: (Սելինջեր) 3) արտասովոր պայմաններում տեղի ունեցող գործողություն՝ *Not even a criminal would wash himself in that nasty ditch water.* (COCA)/ Անգամ հանցագործը *չէր լողանա* այդ կեղտոտ առվի ջրում: 4) տվյալ անձի հագուստը շեշտելու գործողություն՝ *Before going into the street, the printmaker had to dress himself*



in a way that benefit his social pretentions. (COCA)/ Փողոց դուրս գալուց առաջ, տպագրատերը *ստիպված էր հագնվել* իր սոցիալական հավակնություններին համապատասխան: 5) որևէ կերպարի նմանվելու գործողություն՝ I came in to find my daughter *had dressed herself up* in my clothes. (LLA)/ Ես ներս մտա և տեսա, որ աղջիկս *հագել էր* իմ հագուստը: 6) հատուկ առիթով նախատեսված գործողություն՝ Once a year Barfoot *will dress himself* in the elegant and expensive clothing of a gentleman courtier. (COCA)/ Տարին մեկ անգամ Բարֆուտը *կգուզվի* բարեկիրթ պալատականի նրբագեղ և թանկ հագուստով: 7) հրահանգ՝ Go and *wash yourself*. (OALD)/ Գնա՛ և *լվացվի՛ր*:

Ակնհայտ է, որ անդրադարձ բայերի և համապատասխան դերանունների միասնական կիրառությունը հանգեցնում է տարբեր գործաբանական նրբիմաստների, որոնք միշտ չէ, որ գտնում են իրենց համարժեքները հայերենում:

Երրորդ ենթագլխի երկրորդ բաժինը «**Անդրադարձ դերանունների գործաբանական իմաստները**» անդրադառնում է անդրադարձ դերանունների գործաբանական իմաստներին, որոնք առավել հաճախ են գործածվում հետևյալ համատեքստերում՝ 1) խոսողին կամ խոսակցին արժևորելու իմաստ՝ These holidays are designed for people like *yourself*, young, fancy-free and unattached.<sup>9</sup>/ Այս արձակուրդները նախատեսված են *ձեզ նման* մարդկանց համար՝ երիտասարդ, անկախ, ազատ: 2) անձնական դերանունների փոխարեն գործածվող քաղաքավարական ձև՝ Maybe if you tell me a little about *yourself*, everything՝ll be all right. (Steinbeck)/ Եթե դուք մի փոքր պատմեիք *ձեր մասին*, ամեն ինչ լավ կլիներ: 3) բացահայտող կամ սահմանափակող իմաստ՝ A door had opened, words articulated *themselves*. (Huxley)/ Դուռը բացվեց. խոսքերը, կարծես, *ինքնին արտասանվեցին*: 4) հարկադրանք կամ ներգործություն արտահայտող իմաստ՝ The company *has got itself* into difficulties. (OALD)/ Ընկերությունը դժվարությունների է *բախվել*:

Ինչպես երևում է, նշյալ կիրառումները ոչ լիարժեք են արտացոլվում հայերենում կամ փոխանցվում են տարբեր բառային միավորներով:

Երկրորդ գլխի չորրորդ ենթագլուխը «**Սաստկական անդրադարձ կառույցների իմաստակառուցվածքային և գործաբանական առանձնահատկությունները անգլերենում՝ հայերենի զուգադրությամբ**» արտացոլում է անդրադարձ դերանունների երկու տարբեր գործառույթները՝ անդրադարձ և սաստկական, ինչպես նաև ներկայացնում է անգլերենի և հայերենի շեշտող դերանունների կառուցատիպերը և լեզվագործաբանական ներհմաստները: Սույն ենթագլուխը ներառում է երկու բաժին:

Չորրորդ ենթագլխի առաջին բաժնում «**Անգլերենի շեշտող դերանունների կառուցատիպերը՝ հայերենի զուգադրությամբ**» քննարկվում են անգլերենի սաստկական կամ շեշտող դերանունները (*myself, yourself, himself, herself, itself,*

<sup>9</sup>Carter R., McCarthy M. *Cambridge Grammar of English*. Cambridge: CUP, 2006, p. 385.

*ourselves, yourselves, themselves*), որոնք դիտարկվում են անդրադարձ դերանունների շրջանակում: Որոշ լեզվաբանների կողմից դրանք ներկայացվում են որպես երկու առանձին տեսակ՝ 1) *անդրադարձ դերանուններ* և 2) *սաստկական կամ շեշտող դերանուններ*:<sup>10</sup> Մենք կարծում ենք, որ այդ մոտեցումը հակասում է խոսքիմասային դասակարգման սկզբունքին, ըստ որի հաշվի պետք է առնվեն ոչ միայն գործառական, այլև իմաստային և ձևաբանական չափանիշները:

Անգլերենի անդրադարձ դերանուններին հայերենում համարժեք է -վ ածանցով բայը կամ առանց -վ ածանցի բայը և անձնական դերանվան հոլովական ձևը (*ինձ, քեզ, իրեն, մեզ, ձեզ*): Անգլերենի շեշտող դերանունները արտահայտվում են *ինքս, ինքր, ինքն, ինքներս, ինքներդ, ինքներն, իրենք* անձնական դերանունների սաստկական ենթատեսակի միջոցով և կատարում հատուկ ոճական դեր՝ հատուկ շեշտելով դիմային գաղափարը: Հայերենում դրանք համարվում են բաղադրյալ ենթակա, որի բաղադրիչներից ոչ մեկը մյուսի լրացումը չէ:<sup>11</sup>

Չորրորդ ենթագլխի երկրորդ բաժինը «**Շեշտող դերանունների լեզվագործաբանական ներիմաստները**» վերաբերում է անգլերենի և հայերենի շեշտող դերանունների գործաբանական իմաստներին. 1) առանց որևէ մեկի օգնության կատարվող գործողություն՝ *I always design the sets myself* for our plays. (Maugham)/ Որպես կանոն, *ինքս* են ձևավորում մեր ներկայացումները: (Մոեմ) 2) ենթական մասնակցում է գործողությանը կամ դրա ականատեսն է լինում՝ *And I wanted to see her myself.* (Miller)/ *Ես ինքս* ցանկանում էի նրան տեսնել: 3) ենթական վկայակոչում է հայտնի և այլ կարևոր մարդկանց բառերը՝ *The doctor said it himself.* (OALD)/ *Ինքը բժիշկն* ասաց դա: 4) ենթակային ոչ բնորոշ, անսովոր գործողություն՝ *Part of George’s duty was...to find out what they really thought of Harvard, the seminar and—even Kissinger himself.* (Segal)/ Ջորջի պարտականություններից մեկն էլ իմանալն էր, թե ինչ են նրանք մտածում Հարվարդի, սեմինարի, *անգամ իննց Քիսինգերի* մասին: 5) ենթական մնում է հավատարիմ իրեն՝ *None of these people are Meghan Markle. She is herself.*<sup>12</sup>/ Այս մարդկանցից ոչ ոք Մեգան Մարկլը չէ: Նա *տարբերվում է մյուսներից*: 6) որևէ հատկության, որակի արտացոլում *abstract noun+itself*<sup>13</sup> *The manager of the hotel is courtesy itself.* (OALD)/ Հյուրանոցի կառավարիչը *քաղաքավարության մարմնացում* է: 7) «մեղադրանք» արտահայտող իմաստ՝ *“You haven’t acted ethically yourself today,”* observed the captain. (Bradbury)/ *Դուք ինքներդ* բարեկիրթ չվարվեցիք այսօր,– նկատեց նավապետը:

<sup>10</sup>Вейхман Г. *Новое в грамматике современного английского языка*. Москва: Астрель, 2002, с. 46, Eastwood J. *Oxford Guide to English Grammar*. Oxford: OUP, 2002, p.187, Gordon E., Krylova I. *A Grammar of Present-day English*. Moscow: Higher School Publishing House, 1986, pp. 351-352, Tokmajian H. *Modern English Grammar*. Yerevan: Pyunik Publishing House, 1995, pp. 41-42.

<sup>11</sup>Ասատրյան Մ. Ժամանակակից հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատ., 1983, էջ 182,

Պետրոսյան Հ. Հայերենագիտական բառարան, Երևան, «Հայաստան», 1987, էջ 179:

<sup>12</sup><https://www.yahoo.com/celebrity/Meghan-markle-family/>

ինչպես տեսնում ենք, անգլերենի և հայերենի կառույցները ցուցաբերում են նմանատիպ գործաբանական իմաստներ, որոնք հայերենում փոխանցվում են տարբեր բառային միավորներով:

Աշխատանքի երրորդ գլուխը «**Փոխադարձության կարգի կառուցվածքային և իմաստային-գործաբանական քննությունը**» բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլուխը վերնագրված «**Փոխադարձ կառույցների շարահյուսական դասակարգումը**» ուսումնասիրում է փոխադարձ կառույցների ավանդական եզրույթները, անգլերենի և հայերենի համանման կառույցների կառուցվածքային տարբերակումները, նշյալ լեզուներում վերջիններիս ձևաբանական և շարահյուսական փոխակերպումները: Հիշյալ դասակարգումները զետեղված են երկու բաժիններում և զուգորդվում են գծապատկերների ներկայացմամբ:

Առաջին ենթագլխի առաջին բաժնում «**Անգլերենի փոխադարձ կառույցների հիմնական տարատեսակները**» լեզվաբանները տարբերակում են փոխադարձ կառույցների երկու խումբ՝ «բառային», որն արտահայտված է միայն փոխադարձ բայով (*to fight, to kill, to kiss, to marry*) և «վերլուծական», որը հանդես է գալիս փոխադարձ բայով և *each other* կամ *one another* դերանվամբ (*to kiss each other, to marry one another*):<sup>13</sup>

Օրինակ՝ *We kissed and she broke away suddenly.* (Hemingway)

*They are committed to each other and love one another very deeply.* (BNC)

Երկրորդ բաժինը «**Արդի հայերենի փոխադարձ կառույցների կառուցվածքային տարբերակումները**» նվիրված է հայերենի փոխադարձ կառույցների երեք տեսակներին՝ 1) բառային (*կովել, գժովել*), 2) ձևաբանական (*գրկվել-գրկել, պոկվել-պոկել*) և 3) վերլուծական (*համբուրել իրար, միմյանց գրկել*):<sup>14</sup>

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում «**Փոխադարձ կառույցների իմաստաբանական-գործաբանական հայեցակերպը**» ներկայացվում են փոխադարձ բայերի երկու հիմնական մոտեցումները՝ իմաստաբանական և շարահյուսական, ինչպես նաև քննարկվում են անգլերենի փոխադարձ դերանունների գործաբանական կիրառումները տարբեր շարահյուսական կառույցներում՝ հայերենի զուգադրությամբ: Սույն ենթագլուխը բաղկացած է երկու բաժիններից:

Առաջին բաժնում «**Փոխադարձ բայերի իմաստաբանական-գործաբանական և շարահյուսական հետազոտությունները**» իրականացվում է փոխա-

---

<sup>13</sup>Belikova A. *Getting L2 Reflexive and Reciprocal Verbs Right*. Ph. D. dis., McGill University, Montreal, 2013, p. 8, Payne Th. *Understanding English Grammar: A Linguistic Introduction*. Cambridge: CUP, 2011, pp. 310-311, Haspelmath M. *A Frequentist explanation of some universals of reflexive marking* // *Linguistic Discovery*, v. 6 (1), 2008, pp. 40-63 // URL: <https://www.researchgate.net/publication/40853572/> (Retrieved Jan. 1, 2008), Maslova E., Nedjalkov V. *Reciprocal constructions* // *The World Atlas of Language Structures*, New York: OUP, 2005, pp. 430-433 // URL: <https://www.researchgate.net/publication/265225381/> (Retrieved Jan. 1, 2005).

<sup>14</sup>Dum-Tragut J. *Armenian: Modern Eastern Armenian*. Amsterdam: Benjamins, 2009, p. 177.

դարձ բայերի իմաստաբանական և շարահյուսական վերլուծություն: Իմաստաբանական դիտանկյունից լեզվաբանները կիրառում են **«համաչափ»** (*symmetrical*) եզրույթը, որն առաջին անգամ ներմուծել է Ա. Խոլոդովիչը *փոխադարձ բայերի* համար՝ մեկնաբանելով դրանք որպես գործողության երկկողմանի ուղղվածություն ունեցող բայեր (*to divorce, to fight, to greet, to hug, to kiss, to meet*): Անգլերենում առանձնացնում են փոխադարձ գործողությունների երկու տեսակ՝ 1) **«փոխանցումային»** (*конверсный*), երբ իմաստային ակտանտները կատարում են նույն փոխադարձ, բայց, միևնույն ժամանակ, իրարից տարբերվող գործողություն՝ *John and Kate married* (John-ը որպես կին ընտրում է Kate-ին, իսկ Kate-ը որպես ամուսին՝ John-ին) և 2) **«համաչափ»** (*симметричный*), երբ իմաստային ակտանտները կատարում են նույն գործողությունը՝ *Ben and Mike are fighting*, որտեղ միաժամանակ և 'Ben-ը , և ' Mike-ը հանդես են գալիս կռվողի դերում:<sup>15</sup>

Համաձայն շարահյուսական հայեցակերպի՝ լեզվաբանները գործածում են **«փոխադարձ»** (*reciprocal*) եզրույթը, որը համաչափ հարաբերությունների քերականական արտահայտությունն է: Ըստ Չ. Քրայդլերի՝ փոխադարձ ստորոգյալների ամենակարևոր հատկությունը համաչափ փոխհարաբերությունն է երկու կողմերի միջև (*symmetrical relationship*): Նա տարբերակում է փոխադարձ բայերի երկու տեսակ՝ *համաչափ ստորոգյալներ* (*symmetrical predicates*) և *փոխադարձ ստորոգյալներ* (*reciprocal predicates*):<sup>16</sup> Սակայն, վերջինս ենթադրում է փոխադարձության իմաստի ավելի լայն հասկացություն, ըստ որի փոխադարձ բայերը կարող են արտահայտել *անհամաչափություն* (*asymmetry*): Այսպես, տարբեր համատեքստերում որոշ փոխադարձ բայեր (*to argue, to collide, to dispute, to quarrel*) կարող են պարունակել գործողության անհամաչափության իմաստ, ինչը վկայում է տվյալ գործողության մեջ մասնակիցներից մեկի ոչ թե լիակատար, այլ մասնակի ներգրավվածության մասին:

Օրինակ՝ You want *to divorce*? (Segal)

Դու ցանկանում ես *ամուսնալուծվե՞լ*:

Տվյալ պարագայում անհայտ է գործողության մասնակիցների համաչափության աստիճանը, այն, թե ով ինչքան է ներգրավված գործողության մեջ: Այստեղ մեզ օգնության է գալիս լայն համատեքստը՝

Օրինակ՝ You want *to divorce*? You can have a divorce. You՝ re still a good-looking girl. Find a brand-new husband in no time. (Segal)

Տվյալ օրինակում ամուսինը առաջարկում է կնոջը ամուսնալուծվել և նույնիսկ նորովի դասավորել իր կյանքը:

Որոշ հայ լեզվաբանների դիտարկմամբ ևս՝ փոխադարձ բայերը կարող են գործածվել նաև այնպես, երբ գործողության մասնակիցներից մեկի դերը հավա-

<sup>15</sup>Холодович А. *Теоретические проблемы реципрока в современном японском языке* // Проблемы теории грамматического залога, Ленинград: Наука, 1978, с. 5-7.

<sup>16</sup>Kreidler Ch. *Introducing English Semantics*. London, New York: Routledge, 2002, p. 107.

սար չէ մյուսին, այլ ներկայացված է կախյալ հարաբերությամբ, որի պարագայում չի փոխանցվում փոխադարձության բուն նշանակությունը:<sup>17</sup> Այս դեպքում մենք գործ ունենք անհամաչափ գործողության հետ:

Օրինակ՝ Նա *փաթաթվեց* իմ պարանոցին և արտասվեց: (ԱՐԵՎԱԿ)

Մեր հետազոտության արդյունքում պարզեցինք, որ և՛ անզերեմում, և՛ հայերենում գոյություն ունեն ոչ փոխադարձ անցողական բայեր, որոնք առավել հաճախ են հարաբերակցվում փոխադարձ դերանունների հետ՝ շնորհիվ իրենց բառային հետևյալ իմաստների՝ 1) հուզականություն կամ զգացմունքայնություն (*to adore-պաշտել, to detest-զգվել*), 2) հաղորդակցում կամ համագործակցություն (*to talk to-խոսել, to listen-լսել*), 3) զգայական կամ մտավոր ընկալում (*to see-տեսնել, to trust-վստահել*), 4) ֆիզիկական ազդեցություն (*to beat-ծեծել, to clash-բախվել*), 5) տարաբնույթ շարժումներ՝ միացում, անջատում (*to estrange-օտարավել, to join-միանայ*), 6) նմանակում կամ միանմանություն (*to resemble-նմանվել, to simulate-նմանակել*):

Սույն ենթագլխի երկրորդ բաժնում «**Փոխադարձ դերանունների իմաստաբանական-գործաբանական վերլուծությունը**» կատարվել է անզերեմի փոխադարձ դերանուններ *each other* և *one another-ի* և հայերենի համարժեք *իրար* և *միմյանց* դերանունների գործաբանական վերլուծություն: Հանդես գալով տարբեր համատեքստերում՝ զուգադրվող լեզուներում դրանք ցուցաբերում են նմանատիպ գործաբանական նրբիմաստներ, որոնք հազեցնում են խոսքային ասույթը բարձր հուզարտահայտչականությամբ և զգացմունքայնությամբ:

Ժամանակակից անզերեմում փոխադարձ դերանունները ունեն լայն գործածություն, ընդ որում, *each other-ը* մատնացույց է անում երկու անձերի կամ իրերի փոխհարաբերությունների անհատականությունը, իսկ *one another-ը* կենտրոնացնում է մեր ուշադրությունը դրանց համախմբման վրա:<sup>18</sup> Սակայն, ինչպես արձանագրված է մի շարք բառարաններում, հատկապես խոսակցական լեզվում, դրանք լիովին կարող են փոխարինել մեկը մյուսին: Համեմատենք՝

The two candidates respected *each other*. (AHID)

The birds were fighting *one another* over the crumbs. (AHID)

Հետաքրքրական է, որ անզերեմում փոխադարձ դերանունները լայն գործածություն ունեն համապատասխան բայերի հետ, մինչդեռ հայերենում *իրար* և *միմյանց* դերանունների կիրառումը նույն բայերի հետ հնարավոր չէ, քանի որ փոխադարձ դերանվան առկայությունը պահանջում է ներգործական սեռի բայ՝ նրանք *գրկախառնվեցին/ գրկեցին իրար, համբուրվեցին/ համբուրեցին իրար*:<sup>19</sup>

<sup>17</sup>Աբրահամյան Ա. *Բայր ժամանակակից հայերենում*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1962, էջ 634:

<sup>18</sup>Eastwood J. *Oxford Guide to English Grammar*. Oxford: OUP, 2002, p. 240, Carter R., McCarthy M. *Cambridge Grammar of English*. Cambridge: CUP, 2006, p. 76, Kechyan S. *A Course of English Grammar*. 1 year, Yerevan: YSLU Lingua, 2011, p. 263.

<sup>19</sup>Ասատրյան Մ. *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր*, Հատոր Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 1970, էջ 190-191:

Փոխադարձ դերանունների գործաբանական հայեցակերպը ներկայացնելիս՝ օգտվել ենք կորպուսային լեզվաբանության նյութերից՝ կատարելով և՛ որակական, և՛ քանակական վերլուծություններ: Ուսումնասիրության ենթարկելով անգլերենի և հայերենի *each other* և *one another*, *իրար* և *միմյանց* փոխադարձ դերանունների կիրառության դեպքերը Բրիտանական (BNC) (1000 օրինակ) և «ԱՐԵՎԱԿ» (1000 օրինակ) ազգային կորպուսներում՝ մենք եկել ենք այն եզրակացության, որ *each other*-ը և *իրար*-ը գործածվում են միջանձնյա ջերմ հարաբերությունները շեշտելու համար, իսկ *one another*-ը և *միմյանց*-ը հանդես են գալիս չեզոք կամ ձևական, սառը վերաբերմունք արտահայտելու համար:

Օրինակ՝ He never spoke to me. He never touched me. We stood beside *one another* the host and the hostess, and we were not together.

We can't lose *each other* now.<sup>20</sup>

Մենք շատ լավ էինք *իրար* հասկանում: (ԱՐԵՎԱԿ)

Կարիք չկա, որ մանրամասն նկարագրեմ, թե ինչպես աստիճանաբար խորացավ *միմյանց* նկատմամբ մեր սառնությունը... (ԱՐԵՎԱԿ)

Հետազոտության արդյունքները կներկայացնենք հետևյալ աղյուսակով՝

### Աղյուսակ 1

ՓՈՒՍԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ <sup>21</sup> ԵՎ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐ				
դերանուն	հաճախակ.	սառը հարաբեր.	ջերմ հարաբեր.	անշունչ առարկա
<i>each other</i>	10202	73	363	64
<i>one another</i>	2635	249	113	139
իրար	1516	21	158	320
միմյանց	399/57	407	65	29

Երկու լեզուներում էլ վերոնշյալ դերանունները կիրառվում են գրական տարբեր ոճերում, ընդ որում, ամենագործածական փոխադարձ դերանունը անգլերենում *each other*-ն է, իսկ հայերենում՝ *իրար*-ը: Հետաքրքրական է այն փաստը, որ Ամերիկյան անգլերենում (AE) *each other*-ն ու *one another*-ը ավելի գործածական են, քան՝ Բրիտանական անգլերենում (BE), ընդ որում, *each other*-ի կիրառության դեպքերը երկուսում էլ ավելի շատ են: Ուսումնասիրության արդյունքները կներկայացնենք հետևյալ աղյուսակով.

<sup>20</sup>Mkhitarian Y., Vardanyan M. *Constructions with Reflexive and Reciprocal Verbs in English and Armenian* // *Armenian Folia Anglistika*, v. 1 (12), Yerevan, 2014, p. 67.

<sup>21</sup>Ղազարյան Բ. *Շամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982:

**Աղյուսակ 2**

<b>ՓՈՒՆԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒՄ</b>								
	Արձակ	Չափածո	Լրագիր	Գիտակ.	Պաշտ.	Բան.	AE/ Արևել.	BE/ Արևմտ.
each other	152	14	63	102	98	85	70157	10202
one another	37	14	88	189	112	60	18738	2635
իրար	277	31	54	28	86	24	482	18
միմյանց	160	4	106	129	101	0	596	4

**Եզրակացության** մեջ ամփոփվում են հետազոտության արդյունքները:

Անդրադարձ և փոխադարձ կառույցների գործառական և գործաբանական վերլուծությունը անգլերենի և հայերենի հիման վրա թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումները՝

1. Բայասեռն ամենահակասական քերականական կարգերից մեկն է, որն առաջացրել է բազմաթիվ տարակարծություններ՝ ինչպես իր անվանման, սահմանման, այնպես էլ՝ տեսակների և գործառույթների վերաբերյալ: Անգլերենի քերականության մեջ առկա տարբեր ձևակերպումներից («դիաթեզ», «ակտանտային բառաձանցում») բայասեռի ավանդական եզրույթը մնում է «*voice*» գիտաբառը, որը համախմբում է լեզվի ձևաբանական, շարահյուսական և գործաբանական բաղադրիչները՝ մեկ քերականական կարգի շուրջ: Արդի հայերենում շրջանառվում է բայական սեռի բառային-քերականական դրույթը, այսինքն՝ սուբյեկտի և օբյեկտի միայն այն հարաբերություններն են սեռային դրսևորումներ ստանում, որոնք, ինչպես ձևաբանական, այնպես էլ իմաստային արտահայտություններ են գտնում բայի մեջ:
2. Անգլերենում անդրադարձության և փոխադարձության կարգերը առանձին բայական սեռեր չեն կարող համարվել, քանզի զուրկ են քերականական կարգերին բնորոշ կայունությունից: Արտահայտելով բայասեռից տարբեր բառային իմաստներ՝ անդրադարձության և փոխադարձության կարգերը պատկանում են իմաստաբանական դաշտին՝ կազմելով բայական իմաստային միավորներ՝ անդրադարձ և փոխադարձ նշանակություններով: Հայերենում նույնպես անդրադարձության և փոխադարձության կարգերը առանձին բայական սեռեր չեն համարվում:
3. Անգլիացի և հայ լեզվաբանները առանձնացնում են անդրադարձության և փոխադարձության երկու հիմնական ձև՝ *բառային* և *վերլուծական*: Ի տարբերություն անգլերենի, որտեղ բառային տեսակի միավորները՝ անդրադարձ և փոխադարձ բայերը, զուրկ են որևէ ձևաբանական ցուցից, հայերենում

վերջիններս կազմվում են *բաղադրական -վ ածանցով*: Ինչ վերաբերում է անգլերենի անդրադարձ (*myself, yourself, himself* և այլն) և փոխադարձ (*each other* և *one another*) դերանուններին, որոնք անցողական բայի հետ ներկայացնում են անգլերենի վերլուծական տեսակը, հայերենում անդրադարձներին համարժեք են *ինձ, մեզ, քեզ, ձեզ, իրեն* հայցական հոլովով դրված անձնական դերանունները, իսկ փոխադարձներին՝ *իրար* և *միմյանց* համարժեք միավորները: Փաստորեն, անգլերենի և հայերենի անդրադարձ կառույցները ունեն նմանություններ՝ իմաստային, կառուցվածքային առումներով, մինչդեռ ձևաբանորեն դրանք տարբերվում են:

4. Անգլերենում անդրադարձ բայերը ներկայացված են երեք հիմնական մակարդակներում՝ իմաստային, շարահյուսական և վերաբերային:

ա/ Իմաստային մակարդակում անգլերենի անդրադարձ բայերը ներկայացված են *արտաքին* և *ներքին անդրադարձներով*, որոնցից առաջինը անգլերենում արտահայտված է լոկ անդրադարձ բայով, իսկ երկրորդը՝ բայի վերլուծական տեսակով, որի բաղկացուցիչ մասն է կազմում հիմնականում // *դերբայը (Participle II)*: Ինչ վերաբերում է հայերենին, այստեղ երկու իմաստներն էլ ներկայացված են անդրադարձ բայերով: Անդրադարձ բայերի իմաստային խմբերը դասակարգելիս՝ նկատելի է, որ վերջիններիս շարքերը համալրվել են կրավորական և չեզոք սեռերի բայերով, փոխադարձ և անդեմ կառույցներով, որոնք ոչ միշտ են գտնում իրենց արտացոլումը հայերենում:

բ/ Շարահյուսական մակարդակում անգլերենի ենթակայական և խնդրային անդրադարձների զուգադրումը հայերենի հետ երբեմն հանգեցնում է որոշ ընդհանրությունների, թեև կան որոշակի ձևաբանական, կառուցվածքային և դասակարգային տարբերություններ:

գ/ Վերաբերային առումով անգլերենի անդրադարձ դերանունները իրենց հարաբերյալներով ցուցաբերում են որոշակի քերականական շեղումներ, որոնք միտված են խոսքը ավելի զգացմունքային և արտահայտիչ դարձնելուն: Անգլերենի անդրադարձ դերանուններին համարժեք հայերենի անձնական դերանունները անկախ լեզվական միավորներ են, որոնք կարող են գործածվել ազատ իրենց հարաբերյալներից:

5. Անգլերենում հարաբերյալի և անդրադարձ դերանվան ներգործության աստիճանը կարող է տատանվել ծայրահեղից մինչև զրոյական, ինչը բերում է գործողության բացարձակ համընկնմանը: Նշված երկու աստիճանների միջև ընկած են տարբեր ազդեցություն ունեցող գործողություններ, որոնք այս կամ այլ կերպ ներգործում են խնդրի վրա: Հիշյալ տեսակները երբեմն չեն գտնում իրենց արտահայտությունը հայերենում, կամ էլ հագեցված չեն հուզարտահայտչական այրօրինակ երանգներով:

6. Գործաբանական տեսակետից անդրադարձ և փոխադարձ դերանունները, ի տարբերություն համապատասխան բայերի, հագեցված են բարձր զգաց-



մունքայնությամբ և հաճախականությամբ և ցուցաբերում են յուրահատուկ գործաբանական իմաստներ.

ա/ անգլերենի անդրադարձ դերանունների գործաբանական կիրառումները ոչ լիարժեք են արտացոլվում հայերենում կամ փոխանցվում են տարբեր բառային միավորներով, որոնցից ամենահաճախադեպը անձնական դերանուններն են (*ես, ինձ, իրենք, իրենց*),

բ/ փոխադարձ դերանուններ *each other* և *one another*-ը հաճախ գործածվում են որոշ իմաստագործաբանական տարբերակվածությամբ, որը համեմատած հայերենի *իրար* և *միմյանց* դերանունների հետ՝ ավելի աննշան է,

գ/ անգլերենի և հայերենի փոխադարձ դերանունները ունեն տարբերություններ հաճախականության և գրական տարբեր ոճերի կիրառության տեսակետից:

7. ա/ Սաստկական կամ շեշտող իմաստ արտահայտող դերանունները չի կարելի համարել առանձին տեսակ, քանզի դրանց գործառույթը սահմանափակվում է՝ հատուկ «շեշտող» իմաստ հաղորդելով ասույթի այն անդամին, որին դրանք հարաբերակցում են:

բ/ Երկու լեզուներում էլ սաստկական դերանունները կազմում են բաղադրյալի երկրորդ բաղկացուցիչ մաս՝ այն տարբերությամբ, որ անգլերենում դրանք հարաբերակցվում են անդրադարձ դերանվան հետ (*I myself, you yourself, he himself* և այլն), մինչդեռ հայերենում՝ անձնականի հետ (*ես ինքս, դու ինքդ, նա ինքը* և այլն):

գ/ Կառուցատիպային նմանության առումով զուգադրվող լեզուները աչքի են ընկնում սաստկական կառույցների *N<sup>o</sup>1 /P+R=personal+reflexive/, N<sup>o</sup>4 /AbsN+itself/, /R+AbsN/* և *N<sup>o</sup>6 /Pobj.+R/* կաղապարներով, իսկ *N<sup>o</sup>2 /R/, N<sup>o</sup>3 /R+P/, N<sup>o</sup>5 /S+O/* կառուցատիպերը երևան են բերում որոշակի տարբերություններ:

8. Ե՛վ անգլերենում, և՛ հայերենում առանձնացվում են փոխադարձ բայերի «համաչափ» (*symmetrical*) և «անհամաչափ» (*asymmetrical*) գործողություններ, որոնք պայմանավորված են վերջիններիս բառային իմաստներով, ինչպես նաև դրանց հետ գործածվող անձնանիշ կամ իրանիշ գոյականների առկայությամբ:

**Ատենախոսության հիմնադրույթներն** արտացոլված են հետևյալ հրատարակումներում.

1. К вопросу о сопоставительной типологии конструкций с возвратными и взаимными глаголами с семантикой войны // *Современная коммуникативистика*, N4 (23), Москва: Научно-издательский центр ИНФРА-М, 2016, с. 37-40.
2. Անգլերեն և հայերեն փոխադարձ կառույցների կառուցվածքային և իմաստային տարբերությունները // *Բանբեր*, N1 (38), Երևան, ԵՊԼՀ «Լինգվա» հրատ., 2016, էջ 140-149:
3. On Structure and Semantics of Reflexive Constructions in English // *Linguistics and Literature Studies*, v. 4 (6), USA: Horizon Research Publishing, 2016, pp. 428-432, (co-author Y. Mkhitarian).
4. Սաստկական անդրադարձ կառույցների կառուցվածքային և իմաստային-գործաբանական հայեցակերպերը անգլերենում (հայերենի զուգահրոյթյամբ) // *Օտար լեզուները բարձրագույն դպրոցում*, N1 (24), Երևան, ԵՊՀ հրատ., 2018, էջ 41-53:
5. Անդրադարձ կառույցների գործաբանական հայեցակերպը անգլերենում (հայերենի զուգահրոյթյամբ) // *Բանբեր*, N1 (46), Երևան, ԵՊԼՀ «Լինգվա» հրատ., 2018, էջ 70-82:
6. Անդրադարձ կառույցները անգլերենում և հայերենում (կառուցվածքային և իմաստային վերլուծություն) // *Օտար լեզուները բարձրագույն դպրոցում*, N2 (25), Երևան, ԵՊՀ հրատ., 2018, էջ 33-47:

Базикян Лоретта Араевна

**Функциональные и прагматические аспекты возвратных и взаимных конструкций в английском языке (в сопоставлении с армянским)**

Резюме

Настоящая диссертация посвящена функциональному и прагматическому анализу возвратных и взаимных конструкций в английском языке в сопоставлении с армянским.

**Объектом** данной диссертационной работы являются категории возвратности и взаимности, рассмотренные на разных лингвистических уровнях, в частности функциональной лингвистики и прагмалингвистики.

**Предметом** исследования являются конструкции с возвратными и взаимными глаголами, которые в зависимости от контекста приобретают новые функциональные и семантико-прагматические особенности, что приводит к существенным изменениям их функций в речи и в языке в целом.

**Актуальность** данной диссертационной работы обусловлена необходимостью всестороннего исследования возвратных и взаимных конструкций с позиций современных лингвистических наук, а именно функциональной лингвистики и прагматики. Помимо этого, новые данные, полученные в результате исследования возвратных и взаимных конструкций в английском языке, позволяют рассматривать аналогичные конструкции в армянском в новом ракурсе.

**Целью** нашего исследования является выявление функциональных и прагматических особенностей английских возвратных и взаимных конструкций, изучение их видов и функций на разных уровнях языка, а также проведение сопоставительного анализа данных конструкций на базе английского и армянского языков с целью выделения их сходств и различий. Для осуществления этих целей были поставлены следующие **задачи**:

- ◆ определить место категорий возвратности и взаимности в системе языка,
- ◆ изучить принципы классификаций английских возвратных и взаимных конструкций в сравнении с армянским,
- ◆ исследовать особенности возвратных конструкций на трех уровнях языка: семантическом, синтаксическом, кореферентном,
- ◆ установить механизм семантического анализа возвратных глаголов,
- ◆ выделить критерии синтаксической классификации возвратных и взаимных конструкций в лингвистике,
- ◆ провести семантико-прагматический анализ возвратных и взаимных конструкций с целью выявления прагматических особенностей возвратных и взаимных глаголов и соответствующих местоимений в данных конструкциях,

- ♦ проанализировать структурно-семантические и прагмалингвистические особенности эмфатических возвратных конструкций в английском языке в сравнении с армянскими структурами.

Для решения поставленных задач были применены следующие лингвистические **методы**: метод моделирования и трансформации, метод сравнения и сопоставления, а также методы статистического, распределительного, компонентного и контекстного анализ.

**Научная новизна** данной работы заключается в комплексном исследовании возвратных и взаимных конструкций на разных уровнях языка: морфологическом, синтаксическом, семантическом и прагматическом. Впервые осуществляется сравнительный анализ вышеупомянутых конструкций в английском и армянском языках с выделением сходств и различий между двумя изучаемыми языками, что и послужило основой для более глубокого и всестороннего изучения особенностей данных структур в обоих языках.

**Теоретическая значимость** исследования заключается в проведенном семантико-прагматическом анализе категорий возвратности и взаимности и синонимичных конструкций, что способствует обогащению, расширению и восполнению знаний о данных синтаксических конструкциях.

**Практическая значимость** работы определяется тем, что результаты работы могут найти применение в преподавании курсов по функциональной лингвистике, прагмалингвистике, социолингвистике, а также при написании учебников и учебных пособий, для подготовки к курсовым и дипломным работам в качестве теоретического и практического материала по грамматике, семантике, прагматике английского языка.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы.

**Loretta Bazikyan**

**Functional and Pragmatic Aspects of Reflexive and Reciprocal Constructions in English (with special reference to Armenian)**

**Summary**

The present dissertation is devoted to the study of functional and pragmatic aspects of reflexive and reciprocal constructions in English in comparison with those in the Armenian language.

**The object** of the thesis is the categories of reflexivity and reciprocity in the light of functional linguistics and pragmatics.

**The subject matter** of the research is the constructions with reflexive and reciprocal verbs investigated at different linguistic levels and in different contexts, which provides a multi-faceted analysis of these structures as regards their functioning on both speech and language levels.

**The relevance** of the investigation is conditioned by the need of modern linguistics, namely functional linguistics and pragmatics, for a more comprehensive analysis of reflexive and reciprocal constructions. Besides, the new data obtained from the analysis of the English reflexive and reciprocal constructions make it possible to consider the Armenian counterparts from a new perspective.

**The purpose** of our research paper is to identify the pragmatic properties of reflexive and reciprocal constructions, to study their types and functions at different levels of the language system as well as to make a comparative analysis of the constructions under study in the English and Armenian languages, with indicating the similarities and differences of their functioning.

To achieve this goal the following **objectives** are set forth:

- ◆ to define the place of reflexivity and reciprocity in the language system;
- ◆ to analyse the basic principles of classification of reflexive and reciprocal constructions in comparison with the Armenian language;
- ◆ to characterize reflexive constructions at different levels of the language structure: semantic, syntactic and referential;
- ◆ to develop a mechanism for a semantic analysis of reflexive verbs;
- ◆ to determine the criteria for the syntactic classification of reflexive and reciprocal constructions in linguistics;
- ◆ to make a semantic-pragmatic analysis of reflexive and reciprocal constructions, with pointing out the pragmatic meanings of the verbs and corresponding pronouns;
- ◆ to examine the structural-semantic and pragmalinguistic features of emphatic reflexive constructions in English compared with those in Armenian.

To realize the above-mentioned objectives, the following **methods** have been applied: contrastive, distributional, statistical, componential and contextual as well as modeling and transformational methods.

**The scientific novelty** of the research is established by the comprehensive investigation of the English reflexive and reciprocal constructions at different levels of the language system: morphological, syntactic, semantic and pragmatic. The dissertation provides a comparative analysis of the constructions under study on the basis of the English and Armenian languages, with the establishment of convergent and divergent features of their actualization in both languages. This kind of investigation serves as a basis for a more detailed and comprehensive study of reflexive and reciprocal constructions in the English language, which gives an opportunity to look at the Armenian counterparts from a new perspective.

**The theoretical value** of the dissertation is manifested in the semantic-pragmatic study of the English categories of reflexivity and reciprocity and the respective constructions. The investigation can make a certain contribution to the expansion and enrichment of the theory of the categories of reflexivity and reciprocity in English and Armenian.

**The practical value** of the thesis paper lies in the fact that the results of the investigation can be used in the theoretical courses of functional linguistics, pragmalinguistics and sociolinguistics. The data obtained from the study may serve as theoretical and practical bases for lectures and seminars as well as for writing textbooks and term papers on grammar, semantics and pragmatics.

The dissertation consists of Introduction, three Chapters, Conclusion and References.

